ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
Փոփոխականների դասակարգման խնդիրը հակամարտությունների համեմատական ուսումնասիրության ժամանակ

ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

Հոդվածում ուսումնասիրվում է փոփոխականների համախմբի ընտրության խնդիրը հակամարտությունների համեմատական ուսումնասիրությունների ժամանակ, քանզի համեմատական վերլուծության ժամանակ կարևոր է ոչ միայն ուսումնասիրության ընթացքում կիրառվող մեթոդների հստակեցումը, այլ նաև փոփոխականների համախմբի ընտրությունը, որը մեծամասամբ կախված է հետազոտական խնդրի դրվածքից: Կիրառվող փոփոխականների ճիշտ ընտրությունն առանցքային նշանակություն ունի, քանզի, շատ հաճախ, փոփոխականների սխալ ընտրությունը կարող է հանգեցնել սխալ եզրակացության, սխալ քաղաքականության ձևավորման, հետազոտությունը կարող է ներկայացնել բոլորովին այլ պատկեր: Սովորաբար հակամարտու-թյունների համեմատական վերլուծության համար առանձնացվում են փոփոխականների տարբեր համախմբեր, որոնցից յուրաքանչյուրը կիրառելի է միայն կոնկրետ դեպքի համար: Հոդվածում փորձ է արվում ձևավորել փոփոխականների այնպիսի համախումբ, որը կիրառելի կլինի ոչ միայն կոնկրետ դեպքի, այլ նաև այլ հակամարտությունների համեմատական վերլուծության ընթացքում՝ մեծապես ավելացնելով հակամարտությունների համեմատական ուսումնասիրությունների արդյունավետությունը:

Բանալի բառեր
Փոփոխականներ, տեղեկատվական բազա, համեմատական վերլուծություն, մոդել, հակամարտություններ:

Նախաբան

Հակամարտությունների կարգավորման գործընթացների արդյունավետության նկատմամբ լավատեսական բավական կարճատև ալիքը, որն առկա էր 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին, հիմնված էր այն համոզմունքի վրա, որ գերտերությունների հակասությունների ավարտը կհանգեցնի «նոր աշխարհակարգի»

հաստատմանը՝ միաժամանակ խթան և սկզբնակետ հանդիսանալով «տնտեսական գլոբալիզացիայի» համար: Ընդ որում, կարծիք կար[1], որ ազատ շուկայական հարաբերությունների հաստատումը, տնտեսական խոչընդոտների վերացումը, մասնավորեցման գործընթացը կխթանեն պետությունների փոխկապակցվածության ամրապնդումը և կդյուրացնեն միջպետական հարաբերությունների զարգացման գործընթացը: Ենթադրվում էր, որ այս ամենը կվերացներ էթնիկ վեճերի նյութական հիմքերը, իսկ այդ վեճերն այլևս չէին վերաճի քաղաքացիական պատերազմների[2]: Այնուամենայնիվ, հետագա գործընթացները եկան փաստելու, որ միջազգային հակամարտությունների թիվն առաջիկայում ոչ միայն չի կրճատվելու, այլ նաև, որոշ դեպքերում, հանգեցնելու է նոր բախումների թատերաբեմերի առաջացման առանցքային նշանակություն ունեցող այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Եվրասիական կենտրոնի առավել ակտիվ հատվածները՝ Մերձավոր Արևելքն ու Հարավային Կովկասը, Բալկանները և այլն: Հակամարտությունների կարգավորման գործընթացների վերլուծությունն ու դրա հիման վրա կատարվող կանխատեսումներն, իրապես, կարող են լուրջ ազդեցություն ունենալ հետագա առճակատումները կանխելու կամ գոնե հակամարտության զարգացումը ռազմական փուլ չտեղափոխելու առումով: Այդ է պատճառը, որ ավելի ու ավելի է կարևորվում հակամարտությունների համեմատական վերլուծությունների իրականացումը պարզելու համար կարգավորման գործընթացի վրա դրական կամ բացասական ազդեցություն ունեցող գործընթացները, միջնորդների ներգրավվման արդյունավետության բարձրացման հնարավորությունները և այլն: Միջազգային հակամարտությունների համեմատական ուսումնասիրությունների նպատակով առաջարկվել են

[1] **Collier P., Elliot V., Hegre H., Hoeffler A., Reynal-Querol M., Sambanis N.,** Breaking the Conflict Trap: Civil War and Development Policy, World Bank, Oxford University Press, Washington, 2003.

[2] **Tiryakian E.,** Introduction: Comparative Perspectives on Ethnicity and Ethnic Conflicts, *International Journal of Comparative Sociology*, 2004, 45 (3–4), 147–159.

բազմաթիվ մեխանիզմներ, մոդելներ, այնուամենայնիվ, միշտ չէ, որ այդ մոդելների վրա հիմնվելով հնարավոր է կանխատեսել հակամարտությունների առաջացումն ու զարգացումը, որը պայմանավորված է այդ գործընթացների ուսումնասիրության խնդրի ոչ լիարժեք ֆորմալիզացիայի, մասնավորապես, վերլուծության ընթացքում փոփոխականների ոչ ամբողջական շրջանակի ձևավորման հանգամանքով: Ավելին, այդ մոդելները, երբեմն, անտեսում են հակամարտության զարգացման վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեցող բազմաթիվ գործոններ, գործընթացներ, իրադարձություններ և այլն՝ աղավաղելով ոչ միայն իրական պատկերն, այլև խեղաթյուրելով եզրակացություններն ու հետևությունները:

Հակամարտությունների կարգավորման բնագավառում առկա փոփոխությունները Սառը պատերազմից հետո

Հակամարտությունների խաղաղ կարգավորման հիմնական նպատակը բռնությունից խուսափելն ու հետագա բռնությունների կանխարգելումն է հակամարտող կողմերի միջև:

Բանակցությունները կողմերի միջև կիրառվում են որպես գործիք, որի նպատակը ոչ միայն հակամարտության կարգավորումն է, այլ նաև իր մեջ ներառում է մի շարք այլ ասպեկտներ, ինչպես օրինակ, կրթությունը, միջգերատեսչական հանդիպումներն ու միջմշակութային շփումները և այլն[3]: Կարգավորման գործընթացը դեպի փակուղի տանելուն մեծապես նպաստում է վստահության բավական ցածր մակարդակը, որի արդյունքում հակամարտության կարգավորման ջանքերը բախվում են հետևյալ երկընտրանքին՝ հակամարտող կողմերը չեն կարող սկսել հաշտեցման գործընթացն առանց փոխադարձ վստահության որոշակի մակարդակի, բայց և

[3] **Babbit E.,** The Evolution of International Conflict Resolution: From Cold War to Peacebuilding, *Negotiation Journal,* Fall 2009, 539-549.

չեն կարող վստահել մյուս կողմին՝ մինչ խաղաղության գործընթացում ներգրավվելը[4]:

Աշխարհաքաղաքական վերադասավորումները Սառը պատերազմից հետո պահանջում են հակամարտությունների կարգավորման բնագավառում կուտակված գիտելիքի «փոփոխություն և հստակեցում», քանզի «միջազգային հակամարտությունն» այլևս միայն միջպետական հակամարտությունը չէ: Մեր օրերում ավելի հաճախակի են դարձել հակամարտությունները պետության և ոչ պետական խմբերի միջև, և հենց այդ ներքին հակասություններն են, որ դիտարկվում են որպես գլոբալ անվտանգության սպառնալիքներ: Բացի այդ, միջազգային հանրությունը սկսում է միջամտել այն ներքին հակամարտություններին, որտեղ կողմերից մեկը կամ մի քանիսը խախտում են «համընդհանուր նորմեր» համարվող ազգերի ինքնորոշման իրավունքը, մարդու իրավունքները, ժողովրդավարական կառավարման սկզբունքները և այլն[5]: Այդ դեպքում միջամտում են միջազգային խմբերն ու հանձնաժողովները, որոնք ուսումնասիրում են հակամարտության պատմությունը՝ հակամարտության առաջացման պատճառներն ու զարգացման վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոնները բացահայտելու նպատակով: Նրանք կարող են խթանել հակամարտության կարգավորման գործընթացը՝ հաստատելով խաղաղության պահպանման փոխադարձ մթնոլորտ, մեղմացնելով հակասությունները հաշտության միջոցով (նախորդող խնդիրների և դրանց հետևանքների վերանայում), և նպաստել կարգավորման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Այդպիսի կառույցների աշխատանքը կարող է հաջողել միայն այն պարագայում, երբ տեղի իշխանությունները պատրաստակամ են կատարել ձեռք բերված համաձայնությունները, քաղաքացիական հասարակությունը լավ է զարգացած և աջակցում է կայացված որոշումների իրակա-

[4] **Kelman H.,** Building Trust Among Enemies: Building Central Challenge for International Conflict Resolution, *International Journal of Intercultural Relations,* 2005, 5, 639-650.

[5] **Stern P., Druckman D.,** International Conflict Resolution After the Cold War, Washington, DC, National Academy Press, 2000.

նացմանը: Կարևոր է նաև միջազգային հանրության աջակցությունը հաշտեցման խմբի գործունեությանը, սակայն, միանշանակ, կարևոր նշանակություն կարող է ունենալ տվյալ խմբի «ուժեղ մանդատը» և համապատասխան ռեսուրսների առկայությունը[6]: Երբեմն հակամարտությունների կարգավորման գործընթացի ձախողման պատճառ կարող է հանդիսանալ միջնորդների կողմնակալ դիրքորոշումը՝ պայմանավորված տվյալ տարածաշրջանում առկա աշխարհաքաղաքական շահերով, անհրաժեշտ քաղաքական կամքի բացակայությունը, «անհասցե» հայտարարությունները և այլն: Հակամարտությունների անլուծելիությանը[7] կարող է նպաստել նաև միջնորդների շահերի բախումը:

Միջազգային հակամարտությունների կարգավորման բնագավառում առանցքային ձևափոխումների սկիզբը, որն ազդարարավեց Սառը պատերազմի ավարտով, փոփոխություններ արձանագրեց երեք հիմնական ուղղություններում՝

1. Գերտերություններն իրենց ուշադրությունը սևեռեցին բանակցային ռազավարություններն ընդլայնելու վրա՝ խաղաղության գործընթացի նոր օրակարգ սահմանելու նպատակով:
2. Զգալիորեն մեծացավ ոչ կառավարական դերակատաների ազդեցությունը միջազգային հակամարտություններում և՛ որպես հակամարտող կողմեր, և՛ որպես երրորդ կողմ (միջնորդ):
3. Ազգային անվտանգության խնդիրներին զուգահեռ ուշադրության կենտրոնում հայտնվեց նաև անհատի անվտանգության խնդիրը՝ ստեղծելով կառավարական և ոչ կառավարական մարմինների միջև համագործակցության բնագավառում ոչ միայն նոր հնարավորություններ, այլ նաև մեծ լարվածություն[8]:

Խնդրի լուծումը դյուրացնելու նպատակով առաջարկվում էին նաև նոր տեսություններ: «Ժողովրդավարական խաղաղության

---

[6] Ibid.
[7] **Torosyan T.,** To the Resolution of Intractable Conflicts: Nagorno-Karabakh and Kosovo, *Iran and Caucasus,* 2013, 17, 427-441.
[8] **Babbit E.,** Op. cit.

տեսությունը[9]», որն առաջ քաշվեց դեռևս 20-րդ դարի վերջին, մեկն էր այն բազմաթիվ տեսություններից, որոնք, ըստ էության, հիմնավորում են բազմաթիվ էմպիրիկ հետևություններն առ այն, որ ժողովրդավարական կառավարման համակարգ ունեցող պետությունները հազվադեպ են ներքաշվում հակամարտությունների մեջ, որոնք ունենում են ռազմական ելք: Տեսությունը հիմնված է երկու առանցքային գաղափարների վրա՝ ժողովրդավարական պետություններն ունեն ընդհանուր ժողովրդավարական արժեքներ, կանխարգելում են հակամարտությունների առաջացումը, և, ժողովրդավարական ինստիտուտների առկայությունը խոչընդոտում է առաջնորդների ներգավմանը հակամարտություններում:

Այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեցին հետագա գործընթացները, տեսությանն ուղղված բազմաթիվ քննադատությունների հիմքում 21-րդ դարի սկզբում ծագած հակամարտություններն էին (ներպետական, միջազգային, միջտարածաշրջանային և այլն), որոնք խաթարեցին միջազգային քաղաքական կայունությունը, ավելին, շատ հաճախ դիտարկվեցին որպես երրորդ համաշխար-հային պատերազմի սանձազերծման տարբեր պարունակող գործընթացներ: Նոր աշխարհակարգի ձևավորման վերջին փուլը լրջորեն սրեց իրավիճակը, քանի որ անգամ «սառեցված» հակամարտությունները (Աբխազիայի և Հարավային Օսիայի՝ 2008թ. հնգօրյա պատերազմ, Լեռնային Ղարաբաղի՝ 2016թ. չորսօրյա պատերազմ) դարձան իրավիճակի կառավարման կարևոր լծակներ ազդեցիկ պետությունների համար:

Վերոնշյալ խնդիրներն ավելի են բարդացնում հակամարտությունների կարգավորման գործընթացները: Այս համատեքստում առաջնային կարևորություն է ստանում հակամարտությունների համեմատական վերլուծությունների իրականացումը՝ կարգավոր-ման գործընթացի վրա ազդող գործոններն ու հիմնական օրինաչափությունները բացահայտելու առումով:

---

[9] **Ray J.,** Does democracy cause peace?, *Annual Review of Political Science,* 1998, 1, 27–46.

Հակամարտությունների համեմատական ուսումնասիրությունների իրականացման առանձնահատկությունները

Դժվար չէ նկատել, որ հասարակական գիտությունների բնագավառում վերլուծությունների ճնշող մասը համեմատական է: Համեմատական վերլուծությունը հասարակական միավորների (համայնք, ազգ, հասարակություն, մշակույթ), պայմանների և արդյունքների նմանությունների և տարբերությունների հիմնական նկարագրությունն ու բացատրությունն է: Համեմատական վերլուծության նմանատիպ մեկնաբանությունն արտացոլում է այն ավանդույթները, որոնք ձևավորվել են մարդաբանության (միջմշակութային վերլուծություն), սոցիոլոգիայի (հասարակությունների), պատմության (համեմատական պատմություն) և հոգեբանության (համեմատական հոգեբանություն) շրջանակներում[10]: Կարելի է վստահաբար այս շարքին ավելացնել մի շարք այլ գիտություններ, մասնավորապես, քաղաքագիտությունը, որի երեք հիմնական ենթաբաժիններից մեկն է համեմատական քաղաքագիտությունը[11]:

Փաստացի, բոլոր էմպիրիկ հասարակական հետազոտություններն էլ իրենց մեջ ներառում են համեմատության որոշակի բաղադրիչ, քանզի ուսումնասիրվող դեպքերը համեմատվում են տեսականորեն ստացված մոդելային դեպքերի հետ և նրանք համեմատում են դեպքերի արժեքները համապատասխան փոփոխականների էտալոնային արժեքների հետ՝ հավասարությունը գնահատելու համար:

Չնայած մեծ թվով տվյալների հավաքագրմանն ու ամենատարբեր՝ որակական, քանակական, փորձագիտական գնահատումների ու վերլուծությունների առկայությանը՝ միջազգային հակամարտությունների վերաբերյալ բացահայտումները քանակական վերլուծական գրականության մեջ հաճախ անբավարար են: Տարբեր գիտական հոդվածներում կամ զեկույցներում վիճակագրա-կան

[10] **Smelser N.,** On Comparative Analysis, Interdisciplinarity and Internationalization in Sociology, *International Sociology,* 2003, 18(4), 643–657.
[11] **Caramani D.,** Comparative Politics, Oxford University Press, 2014, p. 2.

տվյալների միջև առկա են զգալի տարբերություններ և, մեծամասամբ, պայմանավորված են որոշակի առանձնահատկություններով, մասնավորապես, ինդեքսների ձևավորման և տվյալների հավաքագրման առումով: Նոր, լավ հիմնավորված, համակարգային օրինաչափություններ վեր հանելու փոխարեն, ինչպես արվում է քաղաքագիտության քանակական ուսումնասիրությունների շատ այլ ենթաբաժիններում, միջազգային հակամարտությունների հետազոտությամբ զբաղվող մասնագետները բախվում են տվյալների շատ մեծ բազայի հետ, ինչն իր հերթին բարդացնում է օրինաչափությունների բացահայտման գործընթացը[12]: Ամենատարբեր մոդելների հիմնական թերությունները պայմանավորված են մեծ ծավալի տվյալների մշակման ալգորիթմերի անկատարությամբ, երբեմն էլ՝ գնահատող փորձագետների քաղաքական դիրքորոշումներով, և, որպես հետևանք, կանխատեսումների ոչ հստակությամբ: Վերջին շրջանում փորձ է արվում հետազոտության արդյունքների հավաստիության հասնել դրանց վերարտադրելիության ապահովման ճանապարհով՝ հրապարակելով տվյալների բազայի ծավալուն հավելվածներ: Սակայն դա միայն հնարավորություն է տալիս կանխել ոչ բարեխիղճ հետազոտողների հոդվածների հրապարակումը: Մինչդեռ հավաստիության մեծացումը դրանով ապահովել հնարավոր չէ:

Քաղաքագետներն արդեն վաղուց կանխատեսումներ են անում՝ շեշտը դնելով պատճառահետևանքային կապի վրա, և, միանգամայն բնական է, որ առաջարկվող ցանկացած նոր մեթոդ պետք է ունենա պատճառատետևանքային մեկնաբանություն և բարելավի կանխատեսումը: Պատճառատետևանքային տեսություններն ավելի բարդ է ստուգել, քան կանխատեսումները, սակայն կանխատեսումներն ունեն առավելություններ, քանի որ այդ նույն տեսությունների ակնհայտ հետևանքներն են, ինչպես պատճառահետևանքային վարկածները: Սա նշանակում է, որ ճշգրիտ կանխատեսումները կարող են օգտագործվել մասամբ, այն էլ միայն

[12] **Beck N., King G., Zeng L.,** Improving Quantitative Studies of International Conflict: A Conjecture, *American Political Science Review,* 2000, 94(1), 21-35.

պատճառահետևանքային կապի վերաբերյալ պնդումները հաստատելու նպատակով[13]: Միջազգային հակամարտությունների ուսումնասիրության բնագավառում տվյալների բազայի, կանխատեսումների և ընտրված փոփոխականների ու դրանց ազդեցությանը՝ կատարված ուսումնասիրության արդյունքների վրա, անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, սակայն խնդիրը դիրտարկվել է տարբեր տեսանկյուններից: Առավել ընդունված տարբերակը միջազգային հակամարտությունների վերաբերյալ տվյալների բազայի «բարելավումն» է և տվյալների միջև փոխկապակցվածության ուսումնասիրությունը[14]: Մյուսները փոփոխել են գոյություն ունեցող վիճակագրական մոդելները՝ հակամարտության առանձնահատ-կությունները հաշվի առնելու նպատակով[15]:

Մինչդեռ առկա են նաև հետազոտություններ, որոնցում փորձ է արվել ձևակերպել վիճակագրական մոդելներն արդեն իսկ գոյություն ունեցող ռացիոնալ ընտրության տեսության հիման վրա, որի հիմքում պետությունների, քաղաքական առաջնորդների կամ այլ ներքին դերակատարների շարժառիթների ուսումնասիրությունն է[16]: Հակամարտությունների համեմատական ուսումնասիրությունների ժամանակ շատ հաճախ կիրառվում է նաև առանձին դեպքի ուսումնասիրության մեթոդը, որի առավելությունը ճշգրտության բարձր մակարդակ ապահովելն է կամ ցուցիչները կոնկրետ դեպքի ուսումնասիրության ժամանակ չափելու կարողությունը,

[13]Ibid.

[14] **Jones D., Bremer S., , Singer J**., Mili tarized Interstate Disputes, 1816-1992: Rationale, Coding Rules, and Empirical Patterns, *Conflict Management and Peace Science,* 1996, 15 (2), 163-213.

[15] **Beck N., Tucker R.,** Democracy and Peace: General Law or Limited Phenomenon?, Paper presented at the annual meeting of the Midwest Political Science Association, Chicago, 1998, April; **King G.,** Event Count Models for International Relations: Generalizations and Applications, *International Studies Quarterly,* 1989, 33 (2), 123-147; **King G., Zeng L.,** Logistic Regression in Rare Events Data, Paper presented at the annual meeting of the American Political Science Association, Atlanta, 1999, September.

[16] **Signorino C.,** Strategic Interaction and the Statistical Analysis of International Conflict., *American Political Science Review*, 1999, 93, 279-298, **Smith A.,** A Summary of Political Selection: The Effect of Strategic Choice on the Escalation of International Crises, *American Journal of Political Science*, 1998, 42, 698-701.

ինչն էլ իր հերթին լավագույնս ներկայացնում է տեսական հայեցակարգը, որի բնութագրիչներն անհրաժեշտ է «չափել»։ Հետազոտողների ուսումնասիրության առարկա բազմաթիվ փոփոխականներ ժողովրդավարությունը, իշխանությունը կամ քաղաքական մշակույթը, բավական դժվար է չափելի դարձնել[17]։

Համեմատական վերլուծությունների պարագայում կարևոր է համակարգել համեմատությունների համատեքստը՝ միաժամանակ պահպանելով ինչպես փոփոխականները (ցուցիչները), այնպես էլ նմանությունների և տարբերությունների մեկնաբանության սկզբունքները։ Այս պարագայում, համատեքստի համակարգումն ինքնանպատակ չէ։ Համարժեքության խնդիրների կրճատմանն ուղղված ջանքերը հենվում են երկու մեթոդաբանական սկզբունքների վրա։ Առաջին, հասարակական գիտությունների բնագավառում հետազոտողները շատ հազվադեպ են ընտրում նույն ակնհայտ չափանիշները մի քանի համեմատական ուսումնասիրությունների ժամանակ։ Բայց և այնպես, կան դեպքեր, երբ միևնույն չափանիշները կարող են կիրառվել, մասնավորապես, երբ դիտարկվում են բնակչության՝ ընտրությունների մասնակցության ցուցանիշը՝ քաղաքական մասնակցության վերաբերյալ գնահատականներ տալու նպատակով, և, դա էլ այն դեպքում, երբ այն պետությունները, որոնք ընդգրկված են հետազոտության մեջ, «մոտ» կամ «համեմատելի» դեպքեր են։ Համապատասխանաբար, հետազոտողն առավելագույն արդյունավետ արդյունքներ ապահովելու նպատակով կարող է համեմատել միևնույն սահմանադրական համակարգի մաս կազմող տարբեր շրջաններում (մարզեր) բնակչության՝ ընտրություններին մասնակցության ցուցանիշը[18]։ Նմանատիպ մոտեցում կարելի է ցուցաբերել նաև, երբ հետազոտության առարկան ընտրական և կուսակցական համակարգերն են, քաղաքական մշակույթը և այլն։ Օրինակ, վերոնշյալ մոտեցումը

---

[17] **Bennett A.,** Case Study Methods: Design, Use and Comparative Advantages, Models, Numbers, and Cases: Methods for Studying International Relations, Ed. Nahmias-Wolinsky Y., Sprinz D., 2007, pp. 19-55.

[18] **Smelser N.**, Op. cit.

կարելի է կիրառել չճանաչված պետություններում կուսակցությունների և բազմակուսակցական համակարգերի ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրության ժամանակ, քանզի այս դեպքում, համեմատվող դեպքերը բավականին մոտ են նախընթաց գործընթացների առումով, անցել են պատերազմական փուլի միջով, հստակ չեն գործում քաղաքական համակարգի բոլոր ինստիտուտներն, իսկ դրանց ինստիտուցիոնալացման գործընթացի մասին էլ կարելի է խոսել բավական մեծ վերապահումներով: Բայց այստեղ էլ ցանկալի է հաշվի առնել այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է նախընթաց վարչակարգի տեսակը: Օրինակ, այդ հարցի ուսումնասիրման ժամանակ արդյունավետ կլինի համեմատել կոմունիստական վարչակարգի փլուզումից հետո ինքնորոշված պետությունների նման փոփոխականները:

Երկրորդ սկզբունքի համաձայն, համարժեք ցուցիչների որոնումն, ինքնին, պետք է լինի համեմատական հետազոտություններից անկախ գործընթաց: Քաղաքական մասնակցության գործընթացն, օրինակ, բազմաթիվ բարդ քաղաքական գործընթացների արդյունք է, քանզի դրանք մեծապես տարբերվում են իրենց համատեքստով: Ուստի պետք է նախ և առաջ և՛ տեսական, և՛ գործնական պլանում հստակեցնել, թե ինչ է հասկացվում քաղաքական մասնակցություն ասելով, ապա որոշել, թե ինչ տարբեր դրսևորումներ կարող է ունենալ քաղաքական մասնակցության գործընթացը՝ մասնակցություն քվեարկությանը, քաղաքական կյանքի վրա քաղաքացիական ազդեցության դրսևորումները, ոչ ֆորմալ ազդեցության ձևերը և այլն: Բացի այդ, պետք է իրականացնել համապարփակ հետազոտություն քաղաքական մասնակցություն երևույթի համակարգային ուսումնասիրության և մշակման համար: Պարադոքսն այն է, որ ցուցիչների համարժեքությունն ավելի արդյունավետ ձեռք է բերվում միևնույն երևույթի վերաբերյալ տարբեր պայմաններում ցուցիչների ընտրության գործընթացում: Կրկին անդրադառնալով չճանաչված պետություններում բազմակուսակցական համակար-գերի ձևավորման օրինակին՝ միանշանակ կարելի է փաստել, որ բազմակու-

սակցական համակարգերի ձևավորման գործընթացի վերլուծության ընթացքում ընտրված դեպքերում բավականին տարբեր են ճանաչման գործընթացներն ու դրանով պայմանավորված առանձնահատկությունները, պետության կայացման ուղին, հետևաբար, տարբեր են նաև քաղաքական մասնակցության վրա այս կամ այն կերպով ազդեցություն ունեցող գործոնները: Այս պարագայում հնարավոր է հասնել ցուցիչների համարժեքության ավելի ամբողջական և արդյունավետ մակարդակի:

Ըստ Սմելսերի[19], հետազոտության արդյունքների և ցուցիչների համատեքստի նույնականացնումն ու համապատասխանեցումը կարող են հանգեցնել ավելի համահունչ ու արդյունավետ համեմատական դասակագումների, քան այն տարբերակները, որոնք օգտագործում են հետազոտողները: Քաղաքական մասնակ-ցության ընթացիկ օրինակի վրա հիմվելով՝ կարելի է ասել, որ դասակարգման մեկ տարբերակը կարող է հանգեցնել այլ տեսակների առանձնացման՝ հաշվի առնելով քաղաքական ռեժիմի ռեպրեսիվության մակարդակը, որի համատեքստում իրականացվում է քաղաքական մասնակցությունը՝ ծայրահեղ բռնապետա-կանից մինչև վարչակարգի կայունություն, և քաղաքական մասնակցության կազմակերպական համատեքստը՝ ընտրություն-ներ, ինստիտուցիոնալացված կուսակցություններ, ոչ ֆորմալ խմբեր, հասարակական շարժումներ և այլն:

Փոփոխականների տեսակներն ու փոխկապակցվածության գնահատումը

Փոփոխականը (ցուցիչ) կարևոր հասկացություն է հասարա-կական գիտություններում կիրառվող մեթոդներում: Այն գերադաս հատկանիշ է, բնութագրիչ կամ արդյունք: Դեպքերը (որոշ դեպքե-րում՝ նաև անհատները), կարող են տարբերվել ըստ փոփոխական-ների այն դասի, որին պատկանում են: Շատ հաճախ, այդ դեպքերն անհատներ են, այս կամ այն կազմակերպության անդամներ,

[19] **Smelser N.,** Op. cit.

տարածաշրջաններ, ազգեր և այլն, իսկ որոշ դեպքերի կարող է ցուցաբերվել հայեցակարգային մոտեցում[20]: Օրինակները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Դեպքերի և խմբերի տեսակները[21]

Դեպք (=անհատ)	**Դեպքերի օրինակներ**	**Հնարավոր ընդգրկում**
Անձ	Ռամիլ Սաֆարով	ՆԱՏՕ-ի «գործընկերություն հանուն խաղաղության» ուսում նական ծրագրի բոլոր մասնակիցները (2006թ.)
Երկիր	Հունգարիա, Ռումինիա	Երկիր մոլորակի ողջ բնակչությունը
Ծրագրային ապահովում	SPSS, Stata	Ամբողջ վիճակագրական փաթեթը
Հոդված	Գիտական հոդված «Հայկական քաղաքագիտակ ան հանդեսում»	Հայկական գիտական հանդեսների բոլոր հոդվածները
Կոնֆլիկտային իրավիճակ	Կոնֆլիկտ Ուկրաինայում/ 2013թ.	Վարքագիծը, կոնֆլիկտային իրավիճակը հետխորհրդային տարածքում
Կինոնկար	Interstellar	Գիտական ֆիլմեր
Կազմակերպություն	Freedom House, Transparency International	Ոչ կառավարական կազմակերպություն.

Առհասարակ, փոփոխականները դիտվում են որպես վերլուծության միավորներ, որոնք տարբեր կերպ են մեկնաբանում

[20] **Baur N., Lamnek S.,** Variables, *The Blackwell Encyclopedia of Sociology*, 2007, pp. 1-7.

[21] Աղյուսակը կազմվել է Բաուրի և Լամնեկի աշխատանքում ներկայացված աղյուսակի օրինակով:

հետազոտողները: Հասարակական գիտությունների բնագավառում փոփոխականներն ահռելի նշանակություն ունեն վարկածի ձևավորման տեսանկյունից, ճիշտ ընտրությամբ ապահովում են հետազոտական խնդրի հստակությունը, ինչպես նաև դյուրացնում են չափման սանդղակի ընտրությունը: Փոփոխականն օգնում է խուսափել սուբյեկտիվությունից և ներկայացնել իրադարձությունների, երևույթների և վարքագծի վերաբերյալ իրական պատկերը: Հատկանշական է, որ երբեմն փոփոխականների սխալ ընտրությունը կարող է հանգեցնել սխալ եզրակացության, սխալ քաղաքականության ձևավորման և իրականացման, հետազոտությունը կարող է ներկայացնել բոլորովին այլ պատկեր, որը չի համապատասխանում այդ հասարակությանը (դեպքին)[22]:

Փոփոխականը կարող է տարբեր արժեքներ ստանալ, շահարկ-վել, չափվել և վերահսկվել[23]: Ճշգրիտ չափումն առանցքային նշանակություն ունի, քանզի յուրաքանչյուր վիճակագրական գործընթաց ենթադրում է, որ տվյալներն աղավաղված չեն: Հավաստի տվյալներ կարելի է ձեռք բերել, եթե միայն այդ ենթադրությունը ճիշտ է: Որպես կանոն, վիճակագրական վերլուծություններում առանձնացնում են կախյալ, անկախ և միջամտող փոփոխականներ:

Անկախ փոփոխականներ: Անկախ փոփոխականները բացատրում և հիմնավորում են այլ փոփոխականները, ինչպես նաև նախորդում կախյալ փոփոխականներին, հետևաբար, դրանք բացատրող, կանխատեսող և վերահսկվող (manipulated) փոփոխականներն են: Բացատրական փոփոխականն էլ իր հերթին ունի մի քանի տարատեսակ՝ «հիմնական պատճառային փոփոխական» կամ «պատճառ» և վերահսկող փոփոխականներ[24]: Հետազոտության

[22] **Raiphea Y.,** Variable: Classification, Measurement and Importance in Social Science Research, Journal of Business Management & Social Sciences Research, 2015, **4**, 6, 435-438.
[23] **Kerlinger F.,** Foundations of Behavioral Research, (3rd Edition), New York, Holt, Rinehart and Winston, 1986.
[24] **King G., Keohane R., Verba S.,** Designing Social Inquiry- Scientific Inference in Qualitative Research, Princeton University Press, 1994, pp 77.

խնդրից ելնելով՝ հետազոտողը վերահսկում է անկախ փոփոխա-կանները, կարող է ընտրել դրանց մի մասը կամ փոփոխել դրանք, ինչն ազդում է կախյալ փոփոխականների վրա[25]:

Կախյալ փոփոխականներ: Կախյալ փոփոխականներն անկախ փոփոխականների ազդեցությունն են կրում: Արդյունքը կամ փոփոխություններն այս պարագայում պայմանավորված են անկախ փոփոխականների ներդրմամբ և արտացոլում են անկախ փոփոխականի ներդրման ազդեցությունը:

Միջամտող փոփոխականներ: Փոփոխական, որն ուղղակիորեն չի դիտարկվում, սակայն կապող օղակ է հանդիսանում անկախ և կախյալ փոփոխականների միջև: Որոշ դեպքերում կախյալ և անկախ փոփոխականների միջև կապը չի կարող հաստատվել առանց այլ փոփոխականի միջամտության, որի դերում հանդես է գալիս միջամտող փոփոխականը:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ հայեցակարգի և փոփոխականի միջև առկա տարբե-րություններին: Չափելիությունը հայեցակարգի և փոփոխականի միջև առկա հիմնական տարբերությունն է: Հայեցակարգը մտավոր պատկեր է կամ ընկալում, ուստի և շատ սուբյեկտիվ: Իսկ մյուս կողմից, փոփոխականն արժեք է, որը կարող է փոխվել: Հայե-ցակարգը չի կարող չափվել, ի տարբերություն փոփոխականի, ավելին, չափելի լինելու համար հայեցակարգը պետք է վերափոխվի և դառնա փոփոխական: Որպես օրինակ կարող է դիտարկվել ժողովրդավարությունը, որը հայեցակարգ է, և այն չափելի դարձ-նելու համար պետք է ներկայացնել փոփոխականների ձևով՝ ընտրություններ, քվեարկություն, մասնակցություն և այլն[26]:

Փոփոխականները կարող են տարբերվել ըստ դեպքերի վերլուծության մակարդակի: Անհատների դեպքում

---

[25] **Raiphea Y.,** նշվ. աշխ..

[26] Նույն տեղում:

1. Փոփոխականները նկարագրում են անհատների «իրական բնութագրիչները»:

2. Հարաբերական փոփոխականները հստակեցնում են այդ դեպքի փոխհարաբերություններն այլ դեպքերի հետ:

3. Համատեքստային փոփոխականները հստակեցնում են տվյալ դեպքի ներգրավվածությունը որոշակի խմբում[27]:

Հակամարտությունների վերլուծության դեպքում

1. Փոփոխականները նկարագրում են հակամարտությունների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը, հետևաբար, իրական բնութագրիչներ են:

2. Հարաբերական փոփոխականների հիման վրա կատարված վերլուծությունը թույլ է տալիս կոնկրետ դեպքը համեմատել նմանատիպ այլ հակամարտությունների հետ, ստուգել այլ դեպքերի հետ առկա փոխհարաբերություններն ու հնարավոր կապերը:

3. Համատեքստային փոփոխականներն առավել ամբողջական պատկեր են ներկայացնում հատկապես տարածաշրջանային հակամարտությունների վերլուծության ժամանակ, քանզի հստակեցվում է դեպքի պատկանելությունը որոշակի տարածաշրջանի:

Համեմատական ուսումնասիրություններով զբաղվող բազմաթիվ հետազոտողներ, հատկապես նրանք, ովքեր շեշտը դնում են որակական ուսումնասիրությունների վրա, հետաքրքրված են կոնկրետ պատմական հետևանքներով, արդյունքներով և դրանց պատճառներով, բազմաթիվ նմանատիպ դեպքերի շրջանակներում: Պատմական արդյունքները հաճախ պահանջում են բարդ համակցված բացատրություններ, և շատ դժվար է ապացուցել, թե այդպիսի բացատրությունները որքանով են համապատասխանում գերակայություն ունեցող քանակական հասարակագիտական նորմերին: Երբ պատճառահետևանքային փաստարկները համադրելի են, ապա ոչ թե դեպքերի քանակը, այլ սահմափակ բազմությունն է հանգեցնում խիստ սահմանափակումների[28]:

---

[27] **Baur N., Lamnek S.,** Op. cit.

[28] **Ragin Ch.,** The Comparative Method, Beyond Qualitative and Quantitative Strategies, University of California Press, California, 2014, p. 44

Առհասարակ, հասարակական գիտությունների քանակական և որակական բաժանումն առավել ակնհայտ է հենց համեմատական հասարակական գիտություններում: Ի տարբերություն այլ գիտությունների, այստեղ առավել ամուր են հենց որակական հետազոտությունների կիրառման հիմքերը: Ավելին, այդ հետազոտությունները հակված են լինել «ըստ առանձին դեպքի» (որը հակադրվում է «ըստ փոփոխականների» հետազոտություններին) և «պատմական» (ի տարբերություն պատճառահետևանքայինի)[29]:

«Ըստ փոփոխականների» մոտեցման կիրառելիությունը մեծացել է հատկապես վերջին երկուսուկես տասնամյակների ընթացքում, երբ աճեց հետաքրքրությունը մակրոտնտեսական տեսության ուղղությամբ: «Ըստ փոփոխականների» ուսումնասիրության մեջ հետազոտողն ուսումնասիրում է հասարակական կառույցների միջև առկա ընդհանուր առանձնահատկություններն՝ իբրև փոփոխականներ: Պատճառահետևանքային կապի սույն մոդելը, որն առանցքային դիրք է գրավում այս ռազմավարության մեջ, կառուցվածքային է: Հասարակական միավորները, ինչպիսիք են պետությունները, ունեն կառուցվածքային առանձնահատկություններ, որոնք փոխազդում են այն իմաստով, որ որոշ գործառույթներում փոփոխությունները հանգեցնում են այլ գործառույթների փոփոխությունների, որոնք էլ իրենց հերթին, կարող են այլ փոփոխությունների պատճառ դառնալ: Հասարակական համակարգի առանձնահատկությունները դիտարկվում են որպես քիչ թե շատ մշտական բնորոշիչներ (տարրեր), քանզի դրանք բավականին դանդաղ են փոփոխվում[30]: Այնուամենայնիվ, Աբբոտը[31] խիստ քննադատում է փոփոխականների վրա հիմնված (variable-centered) վերլուծության մեթոդները, քանզի հետազոտողները շատ հաճախ մոռանում են, որ գործ ունեն ոչ միայն փոփոխականների, այլ նաև մարդկանց ու մարդկային կյանքերի հետ: Ավելին, վերջինները

[29] **Ragin Ch.**, Op. cit., p.8.
[30] **Ragin Ch.,** Op. cit., p. 85.
[31] **Abbott A.**, Time Matters. On Theory and Method, University of Chicago Press, Chicago 2001, p. 296 •

հետազոտության մեջ ձևակերպված են որպես «դեպքեր»: Վերոնշյալը, թերևս, վերաբերում է հենց հակամարտությունների բնագավառում կիրառվող համեմատական ուսումնասիրությունների ճնշող մեծամասնությանը, որտեղ որպես փոփոխականներ դիտարկվում են ներքին տեղահանված անձինք, փախստականները, զոհերն ու վիրավորները կամ տվյալ տարածքի ողջ բնակչությունն առհասարակ, և այլն:

Ս. Հանթինգթոնի «Քաղաքակրթությունների բախումը» տեսության ուսումնասիրության ժամանակ (հիմնված է երեք հիմնական էմպիրիկ ենթադրությունների վրա՝ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում ավելի հավանական է տարբեր քաղաքակրթությունների պատկանող պետությունների միջև բախումը, «սառը պատերազմի» շրջանում գերտերությունները խոչընդոտում էին միջքաղաքակրթական հակամարտությունների առաջացմանը, մարդկության պատմության ողջ ընթացքում ավելի հաճախ միմյանց դեմ պայքարի են դուրս եկել տարբեր քաղաքակրթությունների պատկանող պետությունները, քան նույն) հեղինակները բազմաթիվ փոփոխականների շարքում առանձնացնում են «քաղաքակրթության վրա չհիմնված» գործոններ, կամ այլ կերպ, վերահսկող փոփոխականներ, այն է՝ աշխարհագրական դիրքը (աշխարհագրական առումով ոչ հարևան պետությունների միջև պատերազմները քիչ հավանական են, քիչ է բախման հավանականությունը), ռեժիմի տեսակը (ժողովրդավարությունը նվազեցնում է կոշտ առճակատման հավանականությունը) և հարաբերական կարողությունները (ուժային, ռազմական հնարավորություններ)[32]: Ուստի միայն անկախ և կախյալ փոփոխականների հիման վրա կատարված և վերահսկվող փոփոխականների (աշխարհագրական դիրք, տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակություն, ռեժիմի տեսակ և այլն) անտեսմամբ կատարված համեմատական վերլուծության արդյունք-

[32] **Henderson E., Tucker R.,** Clear and Present Strangers: The Clash of Civilizations and International Conflict, *International Studies Quarterly*, 2001, 45, 317–338.

ները կներկայացնեն բոլորովին այլ պատկեր և կսահմանափակեն ամբողջական տվյալներ ունենալու և բոլոր պատճառահետևանքային կապերն ի դերև հանելու հնարավորությունները: Այդ իսկ պատճառով հոդվածն առավելապես կենտրոնացած է հակամարտությունների համեմատական վերլուծության ընթացքում կիրառվող անկախ, կախյալ և միջնորդող փոփոխականների այնպիսի համախմբի ձևավորման խնդրի լուծմանը, որը զերծ կլինի օբյեկտիվ ընկալումներից, հնարավորություն կտա վերհանել բոլոր պատճառահետևանքային կապերը՝ միևնույն ժամանակ չխեղաթյուրելով հակամարտության վերաբերյալ առկա տեղեկատվական մոդելը:

Հակամարտությունների համեմատական վերլուծության փոփոխականների համախմբի ձևավորումը

Էթնոքաղաքական հակամարտությունների համեմատական վերլուծության ընթացքում, հիմնվելով փոքր թվով դեպքերի ուսումնասիրության մեթոդի վրա, որը շատ կարևոր գործիք է բարդ մակրո մակարդակներ ունեցող երևույթների (պատերազմները, հեղափոխությունները, ռեժիմի փոփոխությունը, այդ թվում նաև վերլուծության հավաքական միավորները՝ քաղաք, շրջան, կազմակերպություն, պետություն և այլն) ուսումնասիրության ժամանակ, կարելի է դիտարկել երկու նման պետություններ, որոնք միմյանցից տարբերվում են էթնիկ ճնշման կամ հակամարտության զարգացման մակարդակով: Օրինակ, երկու պետությունները կարող են ունենալ միևնույն քաղաքական պատմությունը, տնտեսական զարգացման կամ ժողովրդագրական մակարդակը, սակայն տարբեր են այդ երկու պետությունների էթնիկ կազմերը կամ այդ խմբերի միջև առկա հակասությունների մակարդակն ու խորությունը: Փոքր քանակով բացատրական փոփոխականների առկայության դեպքում հետազոտողները ավելի հեշտությամբ կարող են բացատրել տարբեր էթնիկ հարաբերությունները: Մասնավորապես, նմանատիպ խնդիրների բացահայտման նպատակով կատարված հետազոտության շրջանակներում փորձ է

արվել ուսումնասիրել Չեչնիայի հակամարտության ընթացքում ծավալված բավական ակտիվ ռազմական գործողությունները, մինչդեռ հարևան Դաղստանում բախումները ոչ այդքան ինտենսիվ էին՝ չնայած մեծ թվով նմանություններին (ընդհուպ նույնիսկ դժգոհությունների, բողոքների նմանություն)[33]: Գրեթե նույն իրավիճակն է արձանագրվել նաև Վրաստանում, որտեղ Աջարիան խուսափեց ռազմական գործողություններից՝ ի տարբերություն Հարավային Օսիայի և Աբխազիայի: Ավելին, ռազմական առճակատումն ընթացավ երկու փուլով՝ 1990-ականներին և 2008թ. օգոստոսին: Դիտարկված երկու օրինակներում էլ որպես կախյալ փոփոխական է ընտրվել հակամարտության (բախումներ, պատերազմական գործողություն-ների ծավալման սահմաններ) առկայությունը կամ բացակայությունը:

Որպես այլընտրանք, կարելի է ընտրել անկախ փոփոխական, կամ դիտարկել երկու դեպքեր, որոնք, թեև ունեն բավական մեծ թվով նմանություններ, սակայն տարբերվում են հիպոթետիկ բացատրական փոփոխականի արժեքով: Էթնիկ հակամարտու-թյուններում դիտարկվող հետագա ցանկացած տարբերություն կարող է վերագրվել անկախ փոփոխականում առկա տարբերու-թյուններին: Կարելի է դիտարկել երկու պետություններ, որոնք ունեն տնտեսական զարգացածության նույն մակարդակը, ռեժիմի տեսակը, սակայն պետություններից մեկը որդեգրել է այնպիսի ընտրական համակարգ, որը նպաստում է էթնիկ ճնշումների թուլացմանը, իսկ մյուսը՝ ոչ: Եվ եթե ուսումնասիրվում են տարբերություններն էթնիկ ճնշումների տեսանկյունից, ապա, դրանք կարող են պայմանավորված լինել ընտրական համակարգով[34]:

---

[33] **Zurcher Ch., Baev P., Koehler J.,** Civil war in the Caucasus, *Understanding civil war: Evidence and analysis,* Washington, D.C.: World Bank, 2005, pp. 259–298.

[34] **Barasko M., Sabet D., Schaffner B.,** Understanding Political Science Research Methods, The Challenge of Inference, Taylor & Francis, New York, 2014, pp. 180-181.

Հետազոտության ընթանցքում կիրառվող փոփոխականներից ոչ բոլորը կարող են զերծ լինել չափման սխալներից: Երբեմն նույնիսկ կասկածի տակ են առնվում փոփոխականների միջև առկա փոխադարձ կապերը: Անտեսված փոփոխականները կարող են ազդեցություն ունենալ ինչպես բացատրական, այնպես էլ կախյալ փոփոխականների վրա: Ընտրողական վերաբերմունքն ընդհանուր առմամբ կարող է հանգեցնել փոփոխականների արժեքների անտեսմանը, ընդհուպ նաև զրոյացմանը[35]: Հակամարտությունների համեմատական վերլուծության փոփոխականների համախմբի ձևավորման հիմքում կարող են լինել անկախ, կախյալ և միջամտող փոփոխականներ, որոնցից ցանկացածի անտեսումը կարող է հանգեցնել հակամարտության մասին տեղեկատվության խեղաթյուրմանը: Ավելին, փոփոխականների ընտրության հարցում ընտրողական կամ հայեցողական մոտեցումը գիտական չէ և հակասում է օբյեկտիվ վերլուծության և կանխատեսման սկզբունքներին:

Առհասարակ, վերլուծության փոփոխականների ընտրությունն առանձնահատուկ է կոնկրետ հակամարտության համար և դրանց համախմբի ընտրությունը յուրաքանչյուր դեպքում կախված է հետազոտական խնդրի դրվածքից: Միաժամանակ, յուրաքանչյուր ուսումնասիրության արդյունքը կախված է ոչ միայն հետազոտության ռազմավարությունից ու խնդրի դրվածքից, այլև օգտագործվող փոփոխականների ճիշտ ընտրությունից: Տարբեր դեպքերի համեմատական վերլուծության համար առանձնացվում են փոփոխականների տարբեր համախմբեր, որոնցից յուրաքանչյուրը, շատ հաճախ, կիրառելի է միայն կոնկրետ դեպքի համար[36]: Ուստի կարևոր է ձևավորել հակամարտությունների համեմատական վերլուծության ժամանակ կիրառվող փոփոխականների այնպիսի

---

[35] **Bollen K.,** Instrumental Variables in Sociology and the Social Sciences, *The Annual Review of Sociology*, 2012, 38, 22-58.

[36] **Թորոսյան Տ., Պետրոսյան Մ.,** Հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, *Հայկական քաղաքագիտական հանդես,* 2015, 1, 135-159:

համախմբեր, որոնցից յուրաքանչյուրը կիրառելի կլինի փոփոխականների այս կամ այն դասին պատկանող դեպքերի համար: Յուրաքանչյուր դասի փոփոխականների համախումբ պետք է միաժամանակ բավարարի անհրաժեշտ և բավարար լինելու պայմաններին: Առաջինը պահանջում է ունենալ այն բոլոր փոփոխականների առկայությունը, որոնցից յուրաքանչյուրի առկայությունը անհրաժեշտ է ուսումնասիրվող երևույթի կամ պատկերի աղավաղում թույլ չտալու համար: Երկրորդը պահանջում է ունենալ հնարավոր նվազագույն թվով փոփոխականներ, որոնց օգտագործումը բավարար է նման աղավաղումը բացառելու համար: Ստորև բերված գծապատկերում ներկայացված են հակամարտությունների համեմատական վերլուծության ընթացքում առանցքային նշանակություն ունեցող դասերը:

Գծապատկեր 1



Համադրելով հակամարտությունների համեմատական ուսումնասիրությունների ժամանակ կիրառվող փոփոխականները՝ կազմվել է ստորև ներկայացված մոդելը, որում ներառված փոփոխականները գործում են տարբեր հարթությունների մեջ,

հետևաբար, նաև չափումն է այլ: Մասնավորապես, փոփոխականները ցույց են տալիս որևէ երևույթի առկայությունը կամ բացակայությունը, հերթագայությունը և, ի վերջո, քանակը[37]: Այդ փոփոխականները խմբավորվել են դասերի (Աղյուսակ 2)՝ նախ և առաջ ըստ հակամարտության զարգացման փուլերի՝ նպատակ ունենալով հստակեցնել յուրաքանչյուր փուլում առկա վճռորոշ դեպքերն ու իրադարձությունները, ինչպես նաև վեր հանելու այնպիսի գործոնները, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն կարող են ունենալ հակամարտության կարգավորման գործընթացի ու հետկոնֆլիկտային փուլի խնդրիրների բացահայտման ու լուծման տեսանկյունից: Հաջորդիվ ներկայացված են հակամարտության բնույթին, հանրաքվեին առնչվող խնդիրներին, կարգավորման սկզբունքներին (միջազգային իրավունք), միջնորդներին, միջազգային դատական ատյաններին դիմելուն ու փախստականներին առնչվող փոփոխականները: Ներկայացված աղյուսակում ներառված փոփոխականները անհրաժեշտ են հստակեցնելու համար հակամարտության զարգացման գործընթացի վրա ազդող և, միևնույն ժամանակ, բավարար են կարգավորման գործընթացի առանձնահատկությունների, խոչընդոտների բացահայտման տեսանկյունից:

Աղյուսակ 2

Փոփոխականների դասեր	Փոփոխականներ
Նախակոնֆլիկտային փուլ	Կարգավիճակը մինչև հակամարտության սկիզբը
	Կարգավիճակի լուծարում
	Թվային գերակշռություն ունեցող ժողովուրդը
	Բողոքի ակցիաների անցկացում
	Բողոքի առաջին դրսևորումների նախաձեռնողը
	Ուժի անհամաչափ կիրառում

[37] **Caramani D.,** Introduction to the Comparative Method with Boolean Algebra, Sage Publications, 2009, p. 2

	մետրոպոլիայի կողմից
	Անկախության միակողմանի հռչակում
Բուն կոնֆլիկտային փուլ	Պատերազմական գործողությունների առկայությունը
	Հակամարտության ծավալման սահմանները
	Արտաքին ռազմական միջամտություն
Հետկոնֆլիկտային փուլ	Հատուկ կարգավիճակի առկայությունը
	Խաղաղապահ ուժերի ներգրավում
	Ժամանակավոր միջազգային կառավարում/ձևաչափը
	Ժողովրդավարական ընտրությունների անցկացման հնարավորություններ
	Անկախության հռչակում բանակցությունների տապալումից հետո
	Անկախության ճանաչում
	Անդամակցություն միջազգային կազմակերպություններին
	Կառավարման համակարգի ընտրություն(ժողովրդավարություն/ավտորիտարիզմ)
	Զինված բախումների վերսկսում
Հակամարտության բնույթը	Ինքնորոշման/ոչ ինքնորոշման
Հանրաքվե	Անցկացված հանրաքվե
	Բնակչության մասնակցությունը հանրաքվեին
	Հանրաքվեի անցկացման պայմաններ
	Հանրաքվեի ընթացքում պատերազմական գործողությունների սանձազերծողը
Կարգավորման սկզբունքներ/միջազգային իրավունք	Կարգավորման սկզբունքների շրջանակի հստակեցում (ո՞ր փաստաթղթերով է ամրագրվում)
	Հանրաքվեի (նոր) անցկացում

	Անկախության խնդրի առկայությունն օրակարգում
Միջնորդների ներգրավում	Կարգավորմամբ զբաղվող միջազգային կազմակերպություններ պետություններ/անհատներ
	Կարգավորմամբ զբաղվող հատուկ կառույցների/խմբերի/կոալիցիաների ձևավորում
	Գերտերությունների ներգրավվածությունը կարգավորման գործընթացում
	Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների ներգրավում
	Հակամարտության բոլոր կողմերի ներգրավվածությունը բանակցային գործընթացում
	Վերջնական կարգավիճակի հստակեցում
	Միջազգային կազմակերպությունների բանաձևեր
	Քաղաքացիական հասարակության ներգրավումը
Միջազգային դատական ատյաններ	Արդարադատ. միջազգային դատարանի կարծիք
Փախստականների խնդիր	Փախստականների խնդրի առկայություն
	Փախստականների խնդիրներով զբաղվող միջազգային կազմակերպություններ
	Ներքին տեղահանված անձանց խնդրի առկայություն
	Փախստականների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների ներգրավվում

Փոփոխականների այս մոդելի կիրառումը հնարավորություն է տալիս սահմանել հակամարտությունների բնույթը, հանրաքվեի անցկացման հնարավորություններն ու դրա անցկացման պայման-

ները, պատերազմական գործողությունների ազդեցության սահմանները հանրաքվեի վերջնական արդյունքի վրա: Հնարավոր կդառնա հստակորեն տարանջատել միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների կիրառումը հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացում: Հակամարտությունների կարգավորման գործընթացում առավել ակտիվ դիրքորոշում ցուցաբերած միջազգային կազմակերպություններում ընդունած բանաձևերի ուսումնասիրությունը կտա հետևյալ հարցի պատասխանը. ինչպիսի՞ ազդեցություն են ունենում միջազգային կազմակերպություններում ընդունված բանաձևերը միջազգային հանրության կարծիքի ձևավորման և հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացում: Կարգավիճակի վերջնա-կան սահմանման խնդիրները ևս լուծելի են դառնում՝ բանաձևերի հստակ ու անկողմնակալ մեկնաբանության դեպքում: Ավելի արդյունավետ են դառնում նաև փախստականների խնդիրների լուծումը, քանզի հստակեցվում են փախստականների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների գործունեության արդյունավետությունն ու այդ գործընթացը խոչընդոտող հիմնական գործոնների շրջանակը: Հակամարտությունների համեմատական վերլուծության իրականացումը փոփոխականների այս համախմբի հիման վրա հնարավորություն կտա զգալիորեն մեծացնել հակամարտությունների համեմատական ուսումնասիրությունների արդյունավետությունը, հնարավոր կդարձնի քննարկվող երևույթների շրջանակ հստակեցումը, համադրել դեպքերն ու իրադարձությունները համակողմանի հետազոտություն իրականացնելու համար, ինչպես նաև բացահայտել կարգավորման վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեցող գործոնների էությունը, կանխատեսել կարգավորման գործընթացի հեռանկարները:

Եզրակացություն

- Համեմատական վերլուծությունների պարագայում կարևոր է համակարգել համեմատությունների համատեքստը՝ միաժամանակ պահպանելով ինչպես փոփոխականները, այնպես էլ նմանությունների և տարբերությունների մեկնաբանության սկզբունքները:
- Հակամարտությունների համեմատական վերլուծության փոփոխականների համախմբի ձևավորման հիմքում կարող են լինել անկախ, կախյալ և միջամտող փոփոխականներ, որոնցից ցանկացածի անտեսումը կարող է հանգեցնել հակամարտության մասին տեղեկատվության խեղաթյուրմանը հետևաբար նաև հակամարտության կարգավորման գործընթացի վրա ունենալ բացասական հետևանքներ: Ավելին, փոփոխականների ընտրության հարցում հայեցողական մոտեցումը հակասում է օբյեկտիվ վերլուծության և կանխատեսման սկզբունքներին:
- Միջազգային հակամարտությունների ուսումնասիրության նպատակով առաջարկվում են բազմաթիվ փոփոխականներ, դրանց վերլուծության մեխանիզմներ, մոդելներ: Այդուհանդերձ, միշտ չէ, որ այդ մոդելներում ներառված փոփոխականները անհրաժեշտ, առավել ևս բավարար են վերլուծելու համար հակամարտության այս կամ այն բաղադրիչին վերաբերող ողջ տեղեկատվական բազան՝ հաշվի առնելով հակամարտության զարգացման բոլոր փուլերում առկա որոշիչ գործոնները, ինչպես նաև լրացուցիչ բարդությունները, որոնք առաջանում են կարգավորման գործընթացում:
- Հոդվածում առաջարկվող փոփոխականների դասակարգման և համախմբերի հիման վրա կատարված վերլուծությունը հնարավորություն է տալիս էապես կրճատել հակամարտությունների այս կամ այն բաղադրիչի արդյունավետ վերլուծության համար անհրաժեշտ փոփոխականների թիվն, այլև դուրս չթողնել այնպիսի փոփոխականներ, որոնց

անտեսումը կաղավաղի պատկերն ու կնվազեցնի եզրակացությունների հավաստիությունը:

- Հակամարտությունների համեմատական վերլուծության փոփոխականների առաջարկվող դասակարգումն ու ըստ այդ դասերի դրանց համախմբերի ձևավորումը կարող է կիրառվել ոչ միայն կոնկրետ դեպքի, այլ նաև առհասարակ հակամարտությունների ուսումնասիրության ժամանակ՝ ապահովելով օբյեկտիվ և համակողմանի վերլուծության համար անհրաժեշտ հիմքերը:

The Classification of Variables in Comparative Study of Conflicts

MARGARIT PETROSYAN
Brusov State University of Laguages and Social Sciences

The article analyzes the problem of selection of a set of variables in comparative study of conflicts since it is important not only to clarify the methods used in the study, but also to select the set of variables which mostly depends on the research problem. The right choice of the variables is of crucial importance because often the wrong choice may lead to wrong conclusions, the wrong policy formulation; the research can present a completely different picture. Usually, for comparative analysis of conflicts, different sets of variables are distinguished each of which is applicable only to a particular case. The article attempts to form a set of variables applicable not only to a specific case, but also to a comparative analysis of conflicts by increasing the effectiveness of comparative studies of conflicts.